ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.01.2015Թ. - 25.08.2015Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

գ. Գետամեջ
2015 թվական

Արձանագրություն

2015 թվականի օգոստոսի 25-ին Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 01.01.2015թ.-25.08.2015թ. հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ավագանու անդամները, համայնքի ազգաբնակչությունը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Ավետիս Մուրադյանը, մասնավորապես նշելով, որ ժողովի նպատակը համայնքում իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելն է:

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Համայնքի ֆինանսական գործունեության մասին տեղեկատվություն.
2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն.
3. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.
4. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների սոցիալական աջակցության բնագավառում.
5. Համայնքի ղեկավարի գործունեությունն առևտրի և ծառայությունների բնագավառում:

ԶԵԿՈՒՅՈՂ – ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդագրություն

Կոտայքի մարզի Գետամեջ համայնքն ունի 180 տնտեսություն, համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 834 մարդ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 560,39 հա:

ԼՍԵՑԻՆ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ֆինանսական գործունեության մասին

Համայնքի եկամուտները

01.01.2015թ-25.08.2015թ.				
Հ/Հ	Եկամուտների անվանումները	Պլանավորված հազ. դրամ	Փաստացի հազ. դրամ	**Կատարման տոկոսը**
1.	Հողի հարկ	3900,0	1850,3	**47**
2.	Գույքահարկ	4280,3	1567,2	**37**
3.	Տեղական տուրքեր	310,0	240.0	**77**
4.	Դոտացիա	9830,7	5733,9	**58**
5.	Վարձակալություն	1696,0	918,1	**54**
6.	Հողի օտարումից մուտքեր	500,0	0,0	**0**
7.	Ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ	4215,5	4215,5	**100**
8.	Այլ ոչ հարկային եկամուտներ	50,0	196,9	**394**
Ընդամենը		**24782,5**	**14721,9**	**60**

Ծախսեր

01.01.2015թ-25.08.2015թ.				
Հ/Հ	Եկամուտների անվանումները	Պլանավորված հազ. դրամ	Փաստացի հազ. դրամ	**Կատարման տոկոսը**
1.	Աշխատավարձ և հավելավճար	15340,0	8819,3	**57**
2.	Էներգետիկ ծառայություն	490,0	180,0	**37**
3.	Կապի ծառայություն	130,0	50,0	**38**
4.	Համակարգչային ծառայություն	300,0	146,0	**49**
5.	Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	780,0	62,0	**8**
6.	Մասնագիտական ծառայություն	204,0	-	**0**
7.	Գրասենյակային նյութեր	280,0	230,0	**82**
8.	Տրանսպորտային նյութեր	1000,0	800,0	**80**
9.	Այլ նպաստներ բյուջեից	500,0	-	**0**
10.	Պարտադիր վճար	20,0	20,0	**100**
11.	Վարչական սարքավորումներ	150,0	-	**0**
12.	Շենքերի և շինութ. վերանորոգում	36152,0	1775,0	**5**
13.	Պահուստային միջոցներ	1003,0	-	**0**
14.	Ոչ նյութական հիմնական միջոցներ	950,0	950,0	**100**
Ընդամենը		**24762,2**	**13032,3**	**53**

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գետամեջ համայնքում կազմակերպվել է միջոցառում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարեդարձի կապակցությամբ:
2. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ համայնքի տարածքում տեղադրվել է խաչքար:
3. 2015 թվականի օգոստոսի 15-ին և 16-ին տրվել է թույլտվություն համայնքի տարածքում կազմակերպելու և անցկացնելու բարեգործական երաժշտական փառատոն, որի հասույթն ուղղվելու է համայնքում մանկական խաղահրապարակի կառուցմանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հաշվետու ժամանակաշրջանում օրինականացվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 172,6 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսներով օժանդակ շինություններ, որի համար համայնքի բյուջե է վճարվել 134 630 (մեկ հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր երեսուն) դրամ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Համայնքում հասարակական աշխատանքների կազմակերպում

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումները: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 39 դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2015թ.-25.08.2015թ. ժամանակահատվածում համայնքի տարածքում գործող.

1. 1 առևտրային և 1 հանրային սննդի օբյեկտների համար տրվել են ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ:

Նիստի օրակարգային հարցերը սպառվեցին և նիստն հայտարարվեց փակված:

Արձանագրությունը կազմեց գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Կ. Սարգսյանը

Կ. S.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**